

ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 – «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում»

մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
համար ներկայացված Ամասյա Արմենի Ղազարյանի «Տնտեսամաթեմատիկական
մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում»
թեմայով ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը

Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության կարևորագույն ուղղություններից
մեկը դրամավարկային քաղաքականությունն է, որն էական նշանակություն ունի գների
ընդհանուր մակարդակի, տնտեսական աճի, զբաղվածության և հասարակության
ընդհանուր բարեկեցության վրա:

Դրամավարկային քաղաքականությունը բաղկացած է երկու հիմնական
գործընթացներից՝ դրամավարկային քաղաքականության մշակում և իրականացում:

Քաղաքականության մշակումը իրենից ենթադրում է քաղաքականության
ռազմավարության որոշում, նպատակային ցուցանիշների որոշում և քաղաքականության
ծրագրերի որոշում և իրականացում: Իսկ դրամավարկային քաղաքականության
իրականացումը ենթադրում է համապատասխան գործիքակազմի միջոցով գործառնական
նպատակի իրականացում:

Գործառնական նպատակը գտնվում է դրամավարկային քաղաքականության
նպատակների շղթայի առաջին օղակում: Այդ շղթան հիմնականում բաղկացած է լինում
երեք մակարդակից՝ դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակ, օրինակ՝
գների կայունություն, միջանկյալ նպատակ, օրինակ՝ միջին կամ երկար ժամկետայնության
տոկոսադրույքները, և գործառնական նպատակ, օրինակ՝ կարճաժամկետ
տոկոսադրույքներ:

Դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակի իրականացման
արդյունավետությունը կախված է գործառնական նպատակի իրականացման
արդյունավետությունից: Մինևույն ժամանակ գործառնական նպատակի իրականացումը
սլայմանավորված է այն գործիքակազմով, որը գտնվում է կենտրոնական բանկերի
տնօրինման ներքո: Ուստի ատենախոսության թեման, որը նվիրված է այս գործիքակազմի
տնտեսամաթեմատիկական մոդելավորմանը, կարևոր նշանակություն ունի կենտրոնական

բանկերի (այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի) համար՝ իրենց գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դրամավարկային քաղաքականության (ԴՎՔ) իրականացման գործիքակազմը առնչվում է ֆինանսական համակարգի բարդ փոխկապվածություններին, որոնք օրեցօր ավելի են բարդանում ՀՀ տնտեսությունում՝ հաշվի առնելով վերջին տարիների տնտեսական աճը, զարգացումը և գործարքների կառուցվածքի բարդացումը: Այդ փոխկապվածությունների վերաբերյալ համակարգային պատկերացում կազմել հնարավոր է տնտեսամաթեմատիկական մոդելավորման միջոցով, ինչը և ուսումնասիրվում է ատենախոսի կողմից:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Աշխատանքի նպատակն է բացահայտել ԴՎՔ իրականացման տնտեսամաթեմատիկական մոդելավորման առանձնահատկությունները, ինչպես նաև դրա միջոցով ներկայացնել առաջարկներ, որոնք կարող են նպաստել ԴՎՔ իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար ատենախոսի կողմից առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրվել են ԴՎՔ իրականացման միջազգային պրակտիկան և գիտական աշխատանքները, ՀՀ ԴՎՔ իրականացման հայեցակարգի որոշ առանձնահատկություններ,
- ուսումնասիրվել են ԴՎՔ ավանդական գործիքների առանձնահատկությունները, առևտրային բանկերի՝ կենտրոնական բանկում (ԿԲ) թղթակցային հաշիվների կառուցվածքը, բանկային համակարգի իրացվելիությունը, ավտոնոմ գործոնները, վերջինների կանխատեսման որոշ առանձնահատկություններ, միջբանկային շուկայում պահանջարկի տարբեր մոդելներ,
- վարկային սպրեդի գնահատման նոր՝ ռիսկից զերծ տոկոսադրույք ներառող, մոդելի միջոցով վերլուծվել է ԴՎՔ իրականացման որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են առնչվել միջբանկային շուկայում կոնտրադենտի ռիսկի հետ,
- իրականացվել է վերլուծություն գրավի չափանիշների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ,

- վերլուծվել են պարտադիր պահուստավորման գործիքի նորմի օպտիմալ մակարդակի որոշման առանձնահատկությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և զրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են ատենախոսության հիմնական նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթ համարվող արդյունքները, ինչպես նաև դրանց տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին գլխում** ներկայացվել են ԴՎՔ մշակման և իրականացման հիմնական առանձնահատկությունները, կիրառվող հիմնական գործիքները: Անդրադարձ է կատարվել նաև մակրոպրոլեկտի քաղաքականությանը:

Ատենախոսության **երկրորդ գլխում** ներկայացվել են ԿԲ հաշվեկշռի հիմնական կառուցվածքը, իրացվելիության պահանջարկի մոդելներ, ինչպես նաև ներկայացվել է վարկային սպրեդի և պարտադիր պահուստավորման օպտիմալ մակարդակի որոշման մոտեցումներ:

Ատենախոսության **երրորդ գլխում** ներկայացվել են ավելցուկային իրացվելիության պահանջարկի մոդելի գնահատման, պարտադիր պահուստավորման օպտիմալ մակարդակի հաշվարկման օրինակներ: Ցույց է տրվել նաև շուկայում անվճարունակության հավանականության աճը զսպելու համար անհրաժեշտ իրացվելիության մակարդակի գնահատման օրինակ:

Եզրակացություններում ներկայացվել են ատենախոսի կողմից ստացված հիմնական արդյունքները:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության մեջ ներկայացված են հետևյալ հիմնական արդյունքները, որոնք իրենց բնույթով հանդիսանում են գիտական նորույթ և ունեն էական նշանակություն

կենտրոնական բանկերի կողմից ԴՎՔ իրականացման արդյունավետության բարձրացման համատեքստում՝

- ԴՎՔ իրականացման մոդելավորման մեթոդաբանությամբ գնահատվել է ՀՀ միջբանկային իրացվելիության պահանջարկի մոդելը,
- մշակվել է պարտադիր պահուստավորման միջինացման օպտիմալ նորմատիվի որոշման մեթոդաբանություն՝ հիմք ընդունելով ռիսկերի կառավարման մեջ կիրառվող գործիքակազմը,
- գրավի չափանիշների կիրառման առանձնահատկությունների հիման վրա ստեղծվել է կառուցակարգ, որի միջոցով վերլուծվում է ԿԲ կողմից իրականացվող հիմնական քաղաքականությունները, որը բավարարում է դիտարկվող չափանիշների, ինչպես նաև առաջարկվել է կառուցակարգի մաթեմատիկական ձևակերպումը ոչ հստակ բազմությունների միջոցով,
- Ռիսկից զերծ տոկոսադրույք ներառող վարկային սպրեդի գնահատման նոր մոդելի և միջբանկային շուկայում իրացվելիության պահանջարկի մոդելի համակցության միջոցով առաջարկվել է մոտեցում՝ միջբանկային շուկայում կոնտրագենտի ռիսկի (կամ շուկայի հնարավոր անկատարության) մակարդակի գնահատման համար:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զուրկ չէ նաև թերություններից, որոնցից կառանձնացնենք հետևյալները.

1. Ատենախոսության 3-րդ գլխի ծավալը, որում պետք է ներկայացվեն հիմնական վերլուծությունները, կազմում է աշխատանքի ընդհանուր ծավալի 10-15%-ը: Նպատակահարմար կլիներ լրացնել 3-րդ գլխի ծավալը՝ ներկայացվող արդյունքների ավելի մանրամասն վերլուծությամբ: Ցանկալի կլիներ նաև «Եզրակացություններ» բաժնում ավելի մանրամասն ներկայացնել ստացված բոլոր արդյունքները, դրանցից կատարել հետևություններ և ներկայացնել առաջարկություններ:
2. Ատենախոսության էջ 45-ում ցանկալի կլիներ նշված գործոնների դրական և բացասական ազդեցությունները բացատրել, քանի որ որոշների դեպքում կապը այդքան էլ պարզ և հասկանալի չէ, օրինակ՝ բյուջետային գործունեության կամ արտարժույթային փոխակերպումների:

3. Ատենախոսության 3.1 ենթագլխում ներկայացվում է ավելցուկային իրացվելիության պահանջարկի լոգիստիկ մոդել, որտեղ ներկայացվում է իրացվելիության և միջբանկային տոկոսադրույքի կապը: Անհասկանալի է, թե ինչու՞ չեն դիտարկվել նաև այլ բացատրող փոփոխականներ, որոնք կարող են ազդել պահանջարկի կորի վրա, օրինակ՝ միջբանկային շուկայի կենտրոնացվածությունը, պետության սուվերեն ռիսկի պրեմիայի մակարդակը և այլն:
4. Ատենախոսության 3.2 ենթագլխում հաշվարկվում է պահուստավորման օպտիմալ մակարդակ, սակայն ներկայացված չէ, թե ստացված պահուստային նորմը տվյալ պահին գործող մեծությունից որքանո՞վ էր բարձր, և որքանո՞վ կհաջողվեր կրճատել ավելացուկային պահուստները: Բացի այդ, ցանկալի կլիներ կիրառել նաև CVaR-ը մեթոդը, քանի որ տվյալների բաշխումը հնարավոր է մեծ չափով շեղվի նորմալ բաշխումից:
5. Ատենախոսության 3.3 ենթագլխում անհրաժեշտ է բացահայտել, թե ինչպիսին կփոխվի անվճարունակության հավանականության 1% աճը զսպելու համար տրամադրվող 33 մլրդ ՀՀ դրամի իրացվելիության չափը, եթե շուկայում փոփոխվի ռիսկից զերծ տոկոսադրույքը, քանի որ վերջինս ներառված է վարկային սպրեդի բանաձևում, և դրանց միջև առկա է ուղիղ կապ:

Եզրակացություն

Նշված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք կարող են հաշվի առնվել ատենախոսի կողմից հետագա հետազոտությունների համար:

Ամասյա Արմենի Ղազարյանի ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Հետազոտության համար ընտրված է ֆինանսական ոլորտում մեծ տարածում ունեցող և արդիական թեմա: Աշխատանքն ունի գիտական և կիրառական նշանակություն, որում հեղինակի կողմից դրվել և լուծվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացման հետ կապված և ֆինանսական ոլորտում գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ, որոնց արդյունքները կարող են օգտագործվել դրամավարկային քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու համար:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 3 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները:

Ամասյա Արմենի Ղազարյանի «Տնտեսամաթեմատիկական մոդելավորումը դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱԽՈՍ

տնտեսագիտության թեկնածու



Տ.Ս. ԴԱՎԹՅԱՆ

Պարոն Տ.Ս. ԴԱՎԹՅԱՆԻ ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար,

բանասիրական գիտությունների թեկնածու՝



Ս.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



16.09.2025թ.